ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
14	Ստորև ներկայացված ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Աշնանային-ձմեռային բաճկոն՝ ուսադիրներով (Ձև 9): Պատրաստվում է մուգ կապույտ գույնի, անջրաթափանց, 50-70 միկրոն հաստությամբ կտորից՝ կազմված ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, կայծակնաճարմանդով կոճկվող, փեշի սկզբից մինչև օձիք, ներկարված 1 սմ հաստությամբ տաք ներդիրից և հանվող տաք ներդիրից (3 սմ հաստությամբ), տաք ներդիրները թևքերով են, որոնք ամրացվում են կայծակնաճարմանդով, ոչխարի մուգ կապույտ մորթուց հանովի օձիքից (օձիքի լայնքը 12 սմ) և տաք ներդիրով գլխանոցից: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում և ուսամասում 2 կտրվածքով են: Միացման տեղով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ: Թևքանիքի վրա անցնում է 2,5 մմ մուգ կարմիր եզրագիծ: Երկու լանջափեշի վրա առկա են 3,5 սմ թեքությամբ կայծակնաճարմանդով կոճկվող ներկարված գրպաններ: Աստառը մետաքսյա է (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ), բաճկոնն ունի ձախ կողմում կոճկվող ծոցագրպան: Ծոցագրպան կարվում է նաև ներդիրի վրա, իսկ գոտկատեղում և ներքում՝ թաքնված գոտկապարան: Բաճկոնը հանվող ուսադիրներով է, որոնք էլ ունեն 2-ական ամրակներ: Գլխանոցը հանովի է և պահվում է մեջքի մասում՝ օձիքի տակ ներկարված գրպանում, որը կայծակնաճարմանդով է: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Կանանց համար ձևը նույնն է, կոճկվում է ձախից, ձմեռային բաճկոնը կարվում է ծնկներից

	15-20 սմ բարձրությամբ: Նախքան բաճկոնների պատրաստումը բաճկոնների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Բաճկոնների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև բաճկոնների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Կանացի և տղամարդու բաճկոնների քանակները՝ համաձայն ձևավորված պատվերի: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
14	